

ՎԻՃԱԿՆԻՍ ՓԱՐԻԶԻ ՄԷՉ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՓԻԻՈՔ

Posted on March 31, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Յ. Կ. Փարիզ, 6 Մարտ 2011

“Այլ տեղ մարդիկ յեղափոխութիւն կը կատարեն, Հայաստանցիները՝ իրենց ճամպրուկները կը պատրաստեն ու կը մեկնին”:



Յ. Կ. Փարիզ, 6 Մարտ 2011

“Այլ տեղ մարդիկ յեղափոխութիւն կը կատարեն, Հայաստանցիները՝ իրենց ճամպրուկները կը պատրաստեն ու կը մեկնին”:



Հայկական Դիտարանը Ուրբաթ իրիկուն, Փետրուար 25ին, Փարիզի Եան'ց ակումբին մէջ, Հայաստանի եւ Սփիւռքի յարաբերութիւններուն նուիրուած վիճարկում մը կազմակերպած էր՝ «Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները 20 տարի անց. հաշուեկշիռ եւ զարգացման հեռանկարներ» տիտղոսով: Քննարկումին կը մասնակցէին Ռոպեր Այտապիրեան՝ Դիտարանի համահիմնադիր, ձեռնարկի վարիչ, Դաւիթ Գրիգորեան՝ IMF-ի ակադ տնտեսագէտ, Policy Forum Armenia (PFA) խորհրդակցական խմբակի, միջազգային տարազումով՝ think tank-ի համահիմնադիր, եւ Թաղաքական գիտութիւններու ուսանող Տիգրան Եկաւեան, որ վարեց վիճարկումը: Ներկայ էին Ֆրանսայի Հայոց Թեմակալ Առաջնորդ՝ Նորվան Արք. Չաքարեան, Սեւրի Սամուէլ-Մուրատ վարժարանի տնօրէն, Վենետիկի Միսիթարեան միաբան Հ. Յարութիւն Վրդ. Պզտիկեան, Հայաստանի դեսպանորդ՝ Աշոտ Ալեքսանեան, CCAF-ի համանախագահ՝ Արա Թորանեան, Հայ Նախկին Ռազմիկներու Միութեան նախագահ Անթուան Պաղտիկեան, Թեմական Խորհուրդի ատենապետ՝ Փաթրիս Ճոլլիւեան, լրագրողներ եւ Հայկական Դիտարանի բարեկամներու կոկիկ բազմութիւն մը:



Պ. Ռոպեր Այտապիրեանի բացման խօսքէն ետք, Տ. Եկաւեան ներկայացուց բանախօսները: Առաջին խօսք առնողը եղաւ Հայկական Դիտարանի համահիմնադիրը: Ան սկիզբէն ընդգծեց, որ այլեւս ժամանակը եկած է ազգովին կեցուածք փոխելու: “Փոխանակ՝ սպասելու եւ հակազդելու դէպքերուն, պետք է սորվինք կանխել զանոնք” ըսաւ ան: Այդ ուղղութեամբ, հակիրճ պատմականը ընելով 2009ին իրենց կողմէ հիմնուած Դիտարանին, ըսաւ թէ Թուրքիա-Հայաստան համաձայնագրին, Արցախի հարցին, Հայաստանի մէջ կաշառակերութեան նիւթերուն շուրջ տեղեկագրութիւններ

պատրաստած, նաեւ Ֆրանսայի հայկական դպրոցներու հաշուեքննութեան մը ծրագիրը մշակած են: Ըսաւ նաեւ, թէ ուսումնասիրած են Ֆրանքեւհայկական խորհուրդի (CFA) ծրագիրը եւ գաղափարը դրական գտնելով հանդերձ ըրած են որոշ դիտողութիւններ: Դիտարանը հետեւած է նաեւ Հայց. Եկեղեցւոյ զարգացումներուն եւ կը փափաքի, որ նման վիճարկում մըն ալ կազմակերպուի այդ նիւթին նուիրուած:

Ապա խօսք առաւ Դաւիթ Գրիգորեան, որ նախքան արտայայտուիլը իր մասնագիտութեան ոլորտէն ներս, ներկայացուց իրենց խորհրդակցական խմբակը՝ PFA-ն: Ան ըսաւ, թէ անոր վարչական կեդրոնը Ուաշինկթըն գտնուելով հանդերձ, կարելի է զայն համարել «հայաստանակենտրոն» կառոյց, իր իսկ բացատրութեամբ: Անոր մաս կը կազմեն Հայաստանէն թէ Սփիւռքէն աւելի քան 60 մասնագետներ: Հիմնուած է 2007ին, սակայն իր մկրտութիւնը ստացած է 2008 Մարտի հայաստանեան ծանօթ դէպքերէն վերջ: PFA շատ կարեւոր, լուրջ տեղեկագրութիւններ պատրաստած է Հայաստանի 2008ի նախագահական ընտրութիւններուն, 2008ի ֆինանսական տագնապին Հայաստանի վրայ ունեցած ազդեցութիւններուն, Երեւանի քաղաքապետական ընտրութիւններուն, անկախութենէն ի վեր՝ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն եւ Հայաստանի բնապահական հարցերուն նուիրուած: PFA-ի տեղակագրութիւնները կարելի է կարդալ՝ www.pf-armenia.org. կայքէջին վրայ:

Ապա Ռ. Այտապիրեան կրկին խօսք առնելով դիտել տուաւ, որ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները միշտ եղած են անորոշ: Նախ երգիծանքով նշեց թէ ինք ալ՝ ինքզինք «սփիւռքակեդրոն» կը նկատէ: Ապա վերլուծելով այդ անորոշութեան պատճառները, ըսաւ թէ Սփիւռքը՝ Ղարաբաղեան շարժման օրերուն իր ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացուց այդ պայքարին վրայ, բոլորովին կամ գոնէ մեծ մասամբ անտեսելով նոր ծնունդ առած Հայաստանի Հանրապետութիւնը, ինչպէս նաեւ այդ ուղղութեամբ կազմակերպչական անհրաժեշտ աշխատանքները: Խօսեցաւ Սփիւռքահայութեան Հայաստանի ղեկավարութեան նկատմամբ վստահութեան պակասին մասին ալ, որպէս ամենէն ցայտուն օրինակ բերելով Հայաստան-Թուրքիա համաձայնագրին առթիւ Սփիւռքի ունեցած պոռթկումը: Ապա, շեշտեց թէ իրենց կարծիքով՝ լուծումի կարօտ ամենէն կարեւոր ու հրատապ հարցն է արտագաղթը: Ատոր որպէս գլխաւոր ազդակ նշելով ընկերային տագնապը, կատարեց Արաբական աշխարհի վերջին զարգացումներուն եւ Հայաստանի կացութեան զուգահեռը ու հարց տուաւ. “Անպայման Եգիպտոսի, Թունուզի, Լիպիոյ իրադարձութիւնները պետք է տեղի ունենան Հայաստանի մէջ, համոզուելու համար, որ ընկերային լուրջ հարցեր կան հոն ալ”: Եզրափակեց ըսելով՝ “Այլ տեղ մարդիկ յեղափոխութիւն կը կատարեն, Հայաստանցիները՝ իրենց ճամպրուկները կը պատրաստեն ու կը մեկնին”:

Այնուհետեւ, Դաւիթ Գրիգորեան ներկայացուց այսօրուան կացութեան իր վերլուծումը, հիմնուելով գլխաւորաբար՝ Հայաստան-Սփիւռք հարցերուն նուիրուած PFA-ի վերջերս հրատարակած վերոնշեալ ծաւալուն հետազօտութեան վրայ: Ուղղակի մեղադրեց

Սփիւռքը, որ ըստ իրեն պետք է շատ ակտիվ պահանջկոտ եղած ըլլար Հայաստանի նկատմամբ: Ան առանց բառերը ծամծամելու, շատ յստակ կերպով ըսաւ, թէ Հայաստանի այսօրուան տնտեսութիւնը ոչ մէկ ապագայ ունի: Յիշելով PFA-ի գեկուցումին մէջ տեղ գտած տուեալները, մանրամասնօրէն բացատրեց, թէ Հայաստանի պիւտճէի հարկային համակարգին մէջ ամեն տարի շուրջ 750 միլիոն տոլար կը մսխուի: Այս գումարին քով, Սփիւռքի կատարած օժանդակութիւնը ովկէանոսին մէջ կաթիլ մը ջուրի նմանցուց ան. թելադրեց, կրկին ու կրկին ընդգծեց, որ պետք չէ նուէրներ ընել Հայաստանին, այլեւ պետք է կատարել ներդրումներ, բայց անմիջական մասնակցութեամբ:

Սփիւռքահայերուն կոչ ըրաւ ներգրաւուելու հետեւեալ երեք տարբերակներէն մէկուն մէջ. ա) դառնալ սեփականատեր/պահանջատեր, բ) գործօն մասնակից, եւ կամ գ) անկողմնակալ դատաւոր: Շեշտեց, որ անկախ՝ ընտրուած տարբերակէն, անհրաժեշտ է հասկնալ, որ նոյնիսկ լաւագոյն ձգտումները կրնան բացասական արդիւնքներու յանգիլ, եթէ անոնք տեղին չեն կատարուած: Ըսաւ, թէ յաճախ կաշառակերութեան, տգիտութեան եւ միամտութեան հասցուցած վնասները համազօր են: Աւելցուց, թէ խիղճ թեթեւցնելու հոգեբանութենէն պետք է ձերբազատիլ: “Շատեր կ’ըսեն թէ «Հայաստանին իմ նուիրած մէկ տոլարին եթէ նոյնիսկ 20 սէնթը տեղ հասնի, արդէն գէշ չէ»: անընդունելի մտածելակերպ է այս, քանի մնացած 80ը կը հարստացնէ կաշառակեր տարրերը եւ այդ գումարներն ալ կը վերածուին ընտրական կաշառքի, երկարածգելով այս անել կացութիւնը եւ երկիրը հասցնելով անդունդի եզրը” ըսաւ ան:

Գրիգորեան բաւական մուշ պատկեր մը պարզեց հայրենիքէն, մատնանշելով մանաւանդ երեւանէն դուրս շրջաններուն աղետալի վիճակը: Ըսաւ թէ ապագայ կերտելու համար միջոցներ պետք են, միջոցներուն համար՝ տեսլական, տեսլականին համար ալ՝ կարող ուժերէ բաղկացած կառավարութիւն: Աւելցուց, թէ Հայաստանի այսօրուան կառավարութիւնը ընդհանրապէս բաղկացած է անկարող տարրերէ. նախարարները իրենց ստանձնած բնագաւառներուն անհրաժեշտ մասնագիտութեամբ օժտուած չեն: Հաւաստեց, թէ եթէ Հայաստանի մէջ ամեն ինչ ընթանար բնականոն, կարող մասնագետներ կառավարէին, կարելի կ’ըլլար երկրին տնտեսութիւնը վերականգնել առաւելագոյնը հինգ տարիէն:

Արծարծուեցաւ նաեւ Հայաստան-Սփիւռքի յարաբերութիւններուն մէջ երկխօսութեան չգոյութեան հարցը: Այն կարծիքը յայտնուեցաւ, թէ ամեն մարդ իր ըսելիքը կ’ըսէ, բայց ոչ մէկը կը լսէ միւսին ըսածը: Ռ. Այտապիրեան այս մասին դիպուկ եւ ուսանելի օրինակ մը բերաւ. ըսաւ թէ երբ Հառուլթ Փաքարտ եւ Գոմփաք ընկերութիւնները որոշեցին միաձուլուիլ, երկու կողմերէն 60 հոգիսոց յանձնախումբ մը «ապաշխարեցաւ» ամբողջ վեց ամիս, պատրաստելու համար այդ քայլը:

Վերջաւորութեան տեղի ունեցաւ հարցումներու բաժին մըն. երբեմն հարցումները վերածուեցան կարճ ճառախօսութիւններու, բայց պետք է բոլորովին բնական նկատել ատիկա, տրուած ըլլալով որ ձեռնարկը կը կրէր վիճարկումի պիտակ:

Անոնք, որոնք լաւատեղեակ չէին հոն արձարժուած նիւթերուն, նոր տուեալներով հարստացուցին իրենց սեփական շտեմարանը, իսկ անոնք որոնք քիչ մը աւելի իրազեկ էին շօշափուած նիւթերուն, առկայ խնդիրները այդքան մերկացուած ձեւով լսելու հաճոյքը վայելեցին:

Երեկոյթը վերջ գտաւ բարեկամական ընթրիքի մը շուրջ, որ ձեւով մը հանդիսացաւ վիճարկումին եզրափակիչ մասը, առիթ տալով հետաքրքրական գրոյցներու՝ սեղանակիցներու միջեւ:

